ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 հուլիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

88
(3297)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ Է ԱԺ-ԻՑ ՀԵՌԱՆՈՒՄ

2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո գործող Ազգային Ժողովի պատգամավոր Լենա Նազարյանը այլեւս չի լինի նոր գումարման խորհրդարանում: Նրա փոխարեն խորհրդարանում իր գործունեությունը կշարունակի ամուսինը՝ ՔՊ-ական պատգամավոր Նարեկ Բաբայանը, որը կրկին մանդատ է ստացել իշխող ուժի համապետական ցուցակով:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Ազգային Ժողովի նախկին փոխնախագահ, պատգամավոր Լենա Նազարյանի տարբեր տարիների տարեկան հայտարարագրերը՝ պարզելու, թե ինչ ունեցվածքով է նա հեռանում խորհրդարանից:

Նազարյանը եղել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր թիմի անդամներից, զբաղեցրել է կուսակցության վարչության փոխնախագահի պաշտոնը, 2017 թվականին ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր, իսկ 2019-2021 թվականներին զբաղեցրել է Ազգային Ժողովի նախագահի տեղակալի պաշտոնը: 2021 թվականի ընտրություններից հետո կրկին ընտրվել է պատգամավոր ՔՊ համապետական ցուցակով:

Հատկանշական է, որ Լենա Նազարյանը նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի ղեկավարած «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին հինգ տարիներին պաշտոնյայի ունեցվածքային կառուցվածքում էական փոփոխություններ չեն արձանագրվել անշարժ գույքի մասով, մինչդեռ զգալիորեն աճել են նրա վարկային պարտավորությունները, իսկ 2025 թվականին հայտարարվել է նաեւ նոր ավտոմեքենայի ձեռքբերում: 2025թ. հայտարարագրի համաձայն՝ Արման Խոջոյանը շարունակում է համատեղ սեփականության իրավունքով տնօրինել Երեւանի Արաբկիր վարչական շրջանում գտնվող երկու բնակարան եւ ավտոկայանատեղի, որոնք ձեռք են բերվել համապատասխանաբար 1995 եւ 2017 թվականներին: Տրանսպորտային միջոցների ցանկում այս տարի արձանագրվել է փոփոխություն. մարտի 21-ին փոխնախարարը 9,5 մլն դրամով ձեռք է բերել 2017 թվականի արտադրության Jaguar մակնիշի ավտոմեքենա: Հատկանշական է, որ նախորդ տարիներին նրա հայտարարագրերում որեւէ տրանսպորտային միջոց նշված չէր: Ֆինանսական ակտիվների մասով բանկային ավանդները տարեսկզբի շուրջ 5,4 մլն դրամից աճել են մինչեւ 7 մլն դրամ, իսկ կանխիկ միջոցները տարեվերջին կազմել են 1,85 մլն դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ վարչապետի աշխատակազմում փոփոխություններ են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի դիրքերը նոր կառավարության ձեւավորման գործընթացում զգալիորեն թուլացել են, եւ մեծ է հավանականությունը, որ նա չի վերանշանակվի նույն պաշտոնում: Մեր տեղեկություններով՝ Արայիկ Հարությունյանը երկարատեւ արձակուրդի է մեկնել՝ հուլիսի 1-ից մինչեւ հուլիսի 24-ը ներառյալ, ինչը իշխանական շրջանակներում արդեն կապում են սպասվող կադրային փոփոխությունների հետ: Ըստ նույն աղբյուրների՝ վարչապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում ամենահավանական թեկնածուն Լիլիթ Մակունցն է, որը համարվում է Նիկոլ Փաշինյանի ամենավստահելի թիմակիցներից մեկը: ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանի պաշտոնավարումն ավարտելուց եւ Երեւան վերադառնալուց հետո Մակունցը նշանակվեց վարչապետի գլխավոր խորհրդական, իսկ այժմ, մեր աղբյուրների փոխանցմամբ, քննարկվում է նրա նշանակումը վարչապետի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի հոկտեմբերի 20-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան ընդդեմ Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի Գոռավան բնակավայրում գտնվող 42 հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության 6 հողամասերի աճուրդներն անվավեր ճանաչելու պահանջով: Հակակոռուպցիոն դատարանը 2026 թվականի հուլիսի 1-ի վճռով բավարարել է Գլխավոր դատախազության հայցը եւ անվավեր է ճանաչել 42 հա ընդհանուր մակերեսով հողամասերի աճուրդները: Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո Գլխավոր դատախազությունը դիմում կներկայացնի Կադաստրի կոմիտե՝ հողատարածքների նկատմամբ Վեդի համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՄԵՆԱԱԶԴԵՑԻԿ ՄԻՋՈՑԸ ՍԵՓԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆ Է»

ArmLur.am-ի «Եկեղեցու ձայնը» հաղորդման հյուրը արժանապատիվ տեր Մովսես քահանա Սահակյանն է:

- 301 թվականին Հայաստանը պետական կրոն հռչակեց քրիստոնեությունը: Ոմանք կարծում են, որ դա թուլացրեց Հայաստանի պետականությունը եւ նպաստեց Արշակունյաց թագավորության անկմանը: Համաձա՞յն եք այս տեսակետին:

- Ոչ: 301 եւ 387 թվականների իրադարձությունները պատճառահետեւանքային կապ չունեն: 387 թվականի բաժանման հիմնական պատճառներն էին ներքին պառակտումները, Արշակունյաց թագավորության թուլացումը, նախարարների եւ արքունիքի հակասությունները, ինչպես նաեւ Հռոմի եւ Պարսկաստանի միջեւ քաղաքական պայքարը: Քրիստոնեությունը, ընդհակառակը, նպաստեց ժողովրդի միասնությանն ու ազգային ինքնության պահպանմանը:

- Ինչպե՞ս քրիստոնեությունն օգնեց հայ ժողովրդին պահպանել իր ինքնությունը:

- Քրիստոնեությունը դարձավ ազգային ինքնության կարեւոր հիմքերից մեկը: Դրա շնորհիվ ստեղծվեց հայկական գրերը, զարգացավ ինքնուրույն մշակույթը եւ գրականությունը, իսկ 451 թվականի պայքարը դարձավ ոչ միայն քաղաքական, այլեւ հոգեւոր ինքնության պաշտպանության խորհրդանիշ:

- Ինչո՞ւ է հայ ժողովուրդը մինչեւ այսօր պահպանել որոշ հեթանոսական սովորույթներ:

- Քրիստոնեությունը Հայաստանում տարածվեց վերեւից դեպի ներքեւ՝ թագավորի միջոցով: Ժողովուրդն ուներ դարերով ձեւավորված ավանդույթներ, որոնցից անմիջապես հրաժարվել հնարավոր չէր: Այդ պատճառով այն սովորույթները, որոնք չէին հակասում քրիստոնեական ուսմունքին, վերաիմաստավորվեցին եւ ստացան քրիստոնեական բովանդակություն:

- Վարդավառն ու Տյառնընդառաջը հեթանոսակա՞ն տոներ են:

- Թեեւ դրանց շուրջ կան տարբեր կարծիքներ, այսօր դրանք եկեղեցու կողմից ընկալվում են որպես քրիստոնեական տոներ: Նրանց ներկայիս խորհուրդն ու բովանդակությունը ամբողջությամբ քրիստոնեական են:

- Կարո՞ղ ենք ասել, որ քրիստոնեությունը դարձավ հայ ժողովրդի փրկությունն ու ազգային դիմագիծը:

- Այո՛: Այն ոչ միայն հոգեւոր փրկություն բերեց, այլեւ նպաստեց ժողովրդի ինքնության, մշակույթի, ավանդույթների եւ ազգային դիմագծի պահպանմանը:

- Արդյո՞ք հեթանոսական որոշ սովորույթների պահպանումը նպաստել է աղանդների տարածմանը:

- Ոչ: Աղանդների տարածման պատճառը մարդկանց հոգեւոր որոնումներն են: Քրիստոնեական ծեսերը վաղուց վերափոխվել են եւ այլեւս հեթանոսական բովանդակություն չունեն:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն մարդկանց, ովքեր չեն ընդունում ոչ հեթանոսությունը, ոչ էլ քրիստոնեությունը եւ դեռ որոնումների մեջ են:

- Քրիստոսի խոսքերով՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը»: Յուրաքանչյուր մարդ իր ամբողջականությունն ու հոգեւոր խաղաղությունը կարող է գտնել Աստծո հետ հարաբերության մեջ:

- Եթե ընտանիքի անդամներից մեկը շեղվել է հավատքի ճանապարհից, ինչպե՞ս կարելի է նրան վերադարձնել:

- Ամենաազդեցիկ միջոցը սեփական օրինակն է: Երբ մարդն ինքն է ապրում հավատքով, նրա վարքն ու գործերը կարող են ուրիշներին նույնպես մոտեցնել Աստծուն:

- Ձեր հոգեւոր ծառայության ընթացքում ո՞րն է եղել ամենադժվար շրջանը:

-Ամենադժվար փուլերը եղել են ճեմարան ընդունվելու եւ քահանա ձեռնադրվելու ժամանակ, երբ եղել են ներքին պայքարներ ու փորձություններ: Սակայն այդ դժվարությունները հաղթահարվել են հավատքի շնորհիվ:

- Ինչո՞ւ հատկապես հոգեւորականներն են հաճախ ենթարկվում ծանր փորձությունների:

- Որքան մեծ է մարդու պատասխանատվությունը, այնքան մեծ են նաեւ նրա փորձությունները: Հոգեւորականի շեղումը կարող է ազդեցություն ունենալ բազմաթիվ մարդկանց վրա, ուստի նրանք առավել շատ ունեն հավատացյալների աղոթքների կարիքը:

- Եթե հոգեւորականը սայթաքում է, հնարավո՞ր է նրա վերադարձը:

- Այո՛: Ինչպես Քրիստոս խաչի ճանապարհին ընկավ եւ շարունակեց իր ճանապարհը, այնպես էլ յուրաքանչյուր մարդ կարող է ապաշխարությամբ վերադառնալ եւ գտնել փրկությունը:

- Ինչո՞ւ է մարդը ընտրում խաչի ճանապարհը, եթե ավելի հեշտ ճանապարհներ կան:

- Քրիստոնեական ուսմունքի համաձայն՝ խաչը տառապանքի խորհրդանիշ չէ միայն, այլ նաեւ փառքի եւ հարության ճանապարհ: Մարդը, հաղթահարելով իր փորձությունները, ավելի է մոտենում Աստծուն եւ հոգեւոր կատարելությանը:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

650 ՄԼՆ ԴՈԼԱՐ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնել է, որ Հայաստանի կառավարությունը հատատել է շուրջ 650 միլիոն դոլարի ֆինանսավորում մայրաքաղաքում մի շարք խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար:

ArmLur.am-ի փոխանցմամբ՝ այդ մասին քաղաքապետը հայտարարել է գործակարգավարական խորհրդակցության ընթացքում՝ նշելով, որ ֆինանսավորման հարցը հաստատվել է ՀՀ կառավարության եւ ներդրումային կոմիտեի կողմից:

Ավինյանի խոսքով՝ միջոցներն ուղղվելու են Աջափնյակ վարչական շրջանում մետրոյի նոր կայարանի կառուցմանը, Երեւանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների ամբողջական արդիականացմանը, հանրային տրանսպորտի համար վերջին խմբաքանակի էլեկտրական ավտոբուսների ձեռքբերմանը, երկու դեպոների վերանորոգմանը, առանձնացված ավտոբուսային գծերի ներդրմանը, ինչպես նաեւ Դալմայի տարածքում շուրջ 250 հեկտար նոր այգիների ստեղծմանը:

Քաղաքապետի գնահատմամբ՝ խոսքը Երեւանի համար առանցքային նշանակություն ունեցող ծրագրերի մասին է: Նա ընդգծել է, որ կառավարությունն արդեն ստանձնել է ֆինանսական պարտավորությունները, իսկ քաղաքապետարանը կիրականացնի նախատեսված ենթակառուցվածքային ծրագրերը:

Անդրադառնալով Աջափնյակի մետրոյի կայարանի կառուցմանը՝ Ավինյանը նշել է, որ այն ներկայում ամենապատրաստ փուլում գտնվող նախագիծն է: Միաժամանակ նա արձանագրել է, որ տարիներ շարունակ նման խոշոր նախագծերի չիրականացման հետեւանքով երկրում թուլացել են դրանց կառավարման եւ իրականացման կարողությունները, ինչն էլ, ըստ նրա, որոշակի ձգձգումների պատճառ է դառնում:

«Մենք հասկանում ենք այն մարդկանց, ովքեր թերահավատորեն են մոտենում այս գործընթացին, սակայն պետք է հաշվի առնել, որ եթե տասնամյակներ շարունակ նման ծրագրեր չեն իրականացվում, դրանց կառավարման եւ իրականացման փորձը ժամանակի ընթացքում կորչում է: Այսօր մեր հիմնական դժվարությունն էլ հենց դրա հետ է կապված»,- նշել է Երեւանի քաղաքապետը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԵՍՊԱՆ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

ՀՀ նախագահը հրամանագիր է ստորագրել Կարեն Գրիգորյանին Պակիստանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան նշանակելու մասին:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 14-րդ հոդվածի.

Արաբական Միացյալ Էմիրություններում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարեն Գրիգորյանին, համատեղության կարգով, նշանակել Պակիստանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Աբու Դաբի)»,- նշված է հրամանագրում:

30 ՎԱԳՈՆ ՊՐՈՊԱՆ ԳԱԶ

Ռուսաստանից դեպի Հայաստան երեկ նախատեսվում էր պրոպան գազի հերթական խոշոր խմբաքանակի տեղափոխում՝ Ադրբեջանի տարածքով:

Ինչպես հայտնում է ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը, խոսքը 30 վագոն ռուսական պրոպան գազի մասին է, որը ուղարկվելու է Բալաջարի կայարանից՝ տարանցելով Ադրբեջանի երկաթուղային ցանցով դեպի Հայաստան:

Նշվում է, որ բեռի տեղափոխումը իրականացվում է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ գործող տարանցիկ փոխադրումների շրջանակում՝ Ադրբեջանի տարածքով:

Հաղորդելով այս մասին՝ ադրբեջանական ԱՊԱ լրատվական գործակալությունը նշում է, որ հունիսի 20-ի տվյալներով՝ Ռուսաստանից Ադրբեջանի տարածքով Հայաստան երեկվա դրությամբ արդեն առաքվել է ավելի քան 29 հազար տոննա հացահատիկ, 7 հազար տոննայից ավելի պարարտանյութ, 414 տոննա անթրացիտ (քարածխի տեսակ), 133 տոննա ալյումին եւ 68 տոննա հնդկաձավար:

Բացի տարանցիկ փոխադրումներից, Ադրբեջանից Հայաստան է արտահանվում նավթամթերք: Երեկվա դրությամբ, ԱՊԱ-ի տվյալներով, Ադրբեջանից Հայաստան է մատակարարվել ավելի քան 13 հազար տոննա դիզելային վառելիք, 979 տոննա ԱԻ-92 եւ 2 հազար 955 տոննա ԱԻ-95 բենզին:

Ա. Վ.

ՈՎՔԵՐ ԿՎԵՐՑՆԵՆ ՄԱՆԴԱՏՆԵՐԸ

«Հայաստան» դաշինքն այսօր առավոտյան հայտարարություն է տարածել, որով փաստացի հայտնել է, որ պատրաստվում է վերցնել Ազգային Ժողովում ստացած մանդատները: Դաշինքը նշել է, որ պատգամավորական մանդատը դիտարկում է ոչ թե որպես պաշտոն կամ արտոնություն, այլ որպես քաղաքական եւ իրավական գործիք՝ գործող իշխանությունների դեմ պայքարը շարունակելու, քաղաքացիների իրավունքները պաշտպանելու եւ ընդդիմադիր օրակարգը խորհրդարանում առաջ մղելու համար:

ArmLur.am-ը ներկայացնում է, թե ովքեր են «Հայաստան» դաշինքի այն 12 պատգամավորները, որոնց նկատմամբ վերջին շրջանում նախաձեռնվել են տարբեր գործընթացներ.

1. Իշխան Սաղաթելյան
2. Աննա Գրիգորյան
3. Սեւակ Խաչատրյան
4. Արթուր Խաչատրյան
5. Քրիստինե Վարդանյան
6. Աղվան Վարդանյան
7. Գեղամ Մանուկյան
8. Ագնեսա Խամոյան
9. Լեւոն Քոչարյան
10. Արթուր Սարգսյան
11. Լիլիթ Գալստյան
12. Մեսրոպ Մանուկյան

Ս. Գ.

ԲՈՂՈՔ Է ՀԱՅՏՆԵԼ

Ռուսաստանը Շվեդիայից բողոքում է Ստոկհոլմում դեսպանատան վրա երկու ԱԹՍ-ի հարձակումից հետո, անվտանգության ոտնձգություն ճանաչելով: Մոսկվան անհրաժեշտություն է տեսնում ամբողջական հետաքննություն իրականացնել, հայտնաբերել եւ պատասխանատվության ենթարկել վնասակարության պատահանքի հետեւանքներին առնչվող անձանց:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ Մոսկվայում Շվեդիայի դեսպան Աննա Քրիստինա Թերեզա Յոհաննեսոնին վճռական բողոք է ներկայացվել՝ Ստոկհոլմում Ռուսաստանի դեսպանատան վրա երկու անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) հարձակման կապակցությամբ:

ՌԴ ԱԳՆ-ի հայտարարության համաձայն՝ միջադեպը գնահատվել է որպես դիվանագիտական ներկայացուցչության անվտանգության նկատմամբ անընդունելի ոտնձգություն: Մոսկվան շվեդական իշխանություններից պահանջել է իրականացնել լիարժեք հետաքննություն, հայտնաբերել եւ պատասխանատվության ենթարկել կազմակերպիչներին ու մեղավորներին, ինչպես նաեւ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ռուսական դիվանագիտական օբյեկտների անվտանգությունն ապահովելու համար:

Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը շեշտել է, որ դիվանագիտական առաքելությունների անվտանգությունը պետք է երաշխավորվի ընդունող պետության կողմից՝ միջազգային իրավունքի եւ դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ գործող կոնվենցիաների համաձայն:

ՄԵԿՆՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուլիսի 6-ին աշխատանքային այցով կմեկնի Ռուսաստանի Դաշնություն՝ Եկատերինբուրգ: Այդ մասին ArmLur.am-ը տեղեկացավ վարչապետի ստորագրած N 602-Ա որոշումից, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության կազմը եւ գործուղման կազմակերպման մանրամասները:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ վարչապետի՝ աշխատանքային այցի ընթացքում նրա պարտականությունների կատարումը դրվելու է ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի վրա:

Վարչապետի որոշմամբ՝ պատվիրակության կազմում ընդգրկվել է նաեւ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գուրգեն Արսենյանը:

ArmLur.am-ի ուսումնասիրած որոշման համաձայն՝ վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի հաշվին կֆինանսավորվեն ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի, վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի, ինչպես նաեւ Կարեն Գասպարյանի, Արմեն Խաչատրյանի, Ռուզաննա Վարդանյանի, Արման Ղազարյանի, Ալեքսանդր Աբրահամյանի, Արման Շահինյանի, Տիգրան Մեհրաբյանի եւ Գեւորգ Գալստյանի օրապահիկի եւ հուշանվերների ձեռքբերման հետ կապված ծախսերը:

Նույն որոշմամբ սահմանվել է, որ վերը նշված անձանց գիշերավարձի, պատվիրակության ներկայացուցչական ծախսերի եւ փոխադրամիջոցների վարձակալության հետ կապված ծախսերը կկատարվեն ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին:

Առանձին կարգավորմամբ որոշվել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանի գործուղման ծախսերը կհոգա էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի գործուղման ծախսերը՝ Արտաքին գործերի նախարարությունը, իսկ Գագիկ Վանոյանի ծախսերը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայությունը:

Որոշմամբ նախատեսվել է նաեւ, որ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանի գործուղման ծախսերը կհոգա Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը, իսկ Սենդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանի գործուղման ծախսերը՝ Սենդամթերքի անվտանգության տեսչական մարմինը:

ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի գործուղման ծախսերը կկատարվեն ընկերության միջոցների հաշվին:

Բացի այդ, վարչապետի որոշմամբ վարչապետի աշխատակազմի ղեկավարին հանձնարարվել է կազմակերպել հուլիսի 6-ին Երեւան-Եկատերինբուրգ-Երեւան երթուղով չվերթը, իսկ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահին՝ աջակցել դրա կազմակերպմանը: Չվերթի կազմակերպման հետ կապված բոլոր ծախսերը կկատարվեն ՀՀ վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՌՈՍԱՏՈՄԸ» ԱՌԱՔԱՐԿՈՒՄ Է ԿԱՌՈՒՑԵԼ

Ռուսաստանը Հայաստանին առաջարկում է կառուցել մեկ կամ երկու բլոկով ատոմակայան, «Վեստի» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում ասել է «Ռոսատոմ» պետական կորպորացիայի ղեկավար Ալեքսեյ Լիխաչովը:

Նա ընդգծել է, որ ներկայումս Հայաստանի էլեկտրաէներգիայի 30%-ը ստացվում է ատոմային էներգիայից, սակայն պահանջարկն աճում է, ինչը կարող է հանգեցնել հզորությունների պակասի առաջիկա տասնամյակներում: Հավելենք, որ Մեծամորի ատոմակայանը կառուցվել է 1969-1977 թվականներին: Ապրիլի 1-ից այն հինգ ամսով դադարեցվել է պլանային վերանորոգման համար՝ կայանի շահագործման ժամկետը մինչեւ 2036 թվականը երկարաձգելու համար:

ԿԱՐՈՂ Է ՓՈՐՁԵԼ ԽԱՓԱՆԵԼ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը ԱՄՆ-Իրան բանակցությունների վերաբերյալ զգուշացրել է, որ Իսրայելը կարող է խափանել դրանք, եթե հնարավորություն ունենա: Բանակցությունները տեղի են ունեցել Շվեյցարիայում՝ Դոհայի եւ Պակիստանի միջնորդությամբ: «Մենք արժեքավոր ենք համարում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ բանակցությունները: Սակայն չպետք է մոռանանք, որ Իսրայելը կարող է խափանել գործընթացը, եթե հնարավորություն ունենա: Այս հարցում բոլոր կողմերը պետք է զգոն լինեն», - «Հաբեր Գլոբալ»-ին ասել է Ֆիդանը: ԱՄՆ-ն եւ Իսրայելը պատերազմ սկսեցին Իրանի դեմ փետրվարի 28-ին: Հունիսին Վաշինգտոնը եւ Թեհրանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որը կոչ էր անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում: Հետագայում, հուշագրի իրականացման վերաբերյալ ԱՄՆ-Իրան բանակցություններ տեղի ունեցան Շվեյցարական Բյուրգենշտոկ հանգստավայրում՝ Դոհայի եւ Իսլամաբադի միջնորդությամբ:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2020 թվականի հունվարի 1-ից հետո վարորդական իրավունքից զրկված այն անձինք, որոնց զրկման ժամկետն ավարտվել է մինչեւ օրենքի ուժի մեջ մտնելը, հուլիսի 6-ից սկսած մեկ տարվա ընթացքում հնարավորություն ունեն վերականգնելու իրենց վարելու իրավունքը՝ առանց կրկին քննություններ հանձնելու:

ArmLur.am-ի փոխանցմամբ՝ այդ մասին ասուլիսի ընթացքում հայտնել է պարեկային ծառայության պետի տեղակալ Արման Չիլինգարյանը:

Նրա խոսքով՝ քաղաքացիները պետք է հերթագրվեն Ներքին գործերի նախարարության պաշտոնական կայքում՝ ընտրելով «Զրկված վարորդական վկայականի վերականգնում՝ առանց քննությունների» բաժինը, այնուհետեւ ընտրեն իրենց նախընտրած հաշվառման-քննական ստորաբաժանումը, ներկայացման օրն ու ժամը:

Սահմանված օրը քաղաքացիները պետք է ներկայանան ընտրված ստորաբաժանում՝ իրենց հետ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Վարելու իրավունքը վերականգնելու համար սահմանված պետական տուրքը կազմում է 50 հազար դրամ, որը պետք է վճարվի 900005003810 հաշվեհամարին: Միաժամանակ, այդ գումարը հնարավոր է վճարել նաեւ հաշվառման-քննական ստորաբաժանումներում առկա վճարային տերմինալների միջոցով:

ArmLur.am-ը տեղեկացնում է, որ վարելու իրավունքը վերականգնած քաղաքացիները կստանան մեկ տարվա փորձաշրջան՝ 6 տուգանային միավորով:

Եթե վարորդական վկայականի գործողության ժամկետն արդեն լրացել է, քաղաքացիները, բացի 50 հազար դրամ պետական տուրքից, պետք է վճարեն նաեւ նոր վարորդական վկայական ստանալու համար նախատեսված պետական տուրքը: Պլաստիկ քարտի տեսքով վարորդական վկայականի արժեքը կազմում է 12 հազար դրամ, իսկ թվային վարորդական վկայականինը՝ 6 հազար դրամ: Իսկ այն անձինք, որոնց վարորդական վկայականները դեռեւս գործող են, լրացուցիչ վճարում կատարելու անհրաժեշտություն չեն ունենա եւ համապատասխան ստորաբաժանումից պարզապես կստանան իրենց նախկին վարորդական վկայականը:

Պարեկային ծառայության պետի տեղակալ Արման Չիլինգարյանի տվյալներով՝ օրենքի այս կարգավորումը վերաբերում է շուրջ 18 հազար վարորդական իրավունքից զրկված անձանց:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐԸ ՄԻ ՔԱՆԻՄՆ ԵՆ

Քննչական կոմիտեում քննվող մեկ տասնյակից ավելի քրեական վարույթների շրջանակում 70-ից ավելի հասցեներում կատարվում են միաժամանակյա խուզարկություններ: Այս մասին ArmLur.am-ին հայտնել են Քննչական կոմիտեից:

Հիշեցնենք, որ երեկ վաղ առավոտից խուզարկություններ են իրականացվում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ, բարեգործ եւ բարերար Գագիկ Ծառուկյանի առանձնատանը, ինչպես նաեւ նրան պատկանող մի շարք ընկերություններում:

ArmLur.am-ի աղբյուրները փոխանցում են, որ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ հոդվածները մի քանիսն են:

Գագիկ Ծառուկյանի առանձնատուն են մտել փողերի լվացման, հարկերից խուսափելու, խարդախության քրեական վարույթի շրջանակներում:

Գագիկ Ծառուկյանին պատկանող Երեւանի «Արարատ» կոնյակի-գինու-օղու կոմբինատի աշխատակիցները դրսում են, նրանց թույլ չեն տալիս մտնել ներս, իսկ ներսում խուզարկություններ են իրականացվում: Երեկ անվտանգության աշխատակիցը կոմբինատի աշխատակիցներին հորդորեց չսպասել եւ տուն գնալ, սակայն այլ մանրամասներ չներկայացրեց:

ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԵՆ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ

Հուլիսի 4-ին «Սպիտակ» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խմբերը «Սպիտակ» բժշկական կենտրոն են տեղափոխել 3 քաղաքացու՝ դանակահարված վիճակում: Ինչպես տեղից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը բժիշկները քրեական եւ համայնքային ոստիկաններին հայտնել են, որ վիրավորները գտնվում են վիրահատարանում եւ ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալու:

Մինչ բժիշկները պայքարում են վիրավորների կյանքի համար, քրեական եւ համայնքային ոստիկանները պարզել են, որ վիրավորներն են Սպիտակ խոշորացված համայնքի Զրաշեն բնակավայրի նախկին վարչական ղեկավար Արմեն Եղիազարյանը, նրա հայրն ու մայրը: Այս պահին քրեական եւ համայնքային ոստիկանները պարզում են, թե որտեղ են նրանք դանակահարվել:

Դեպքի փաստով ոստիկանության Սպիտակի բաժում փաստաթղթեր են կազմվել, որոնք հնարավոր է փոխանցվեն ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Սպիտակի քննչական բաժին: Քրեական եւ համայնքային ոստիկանները պարզում են վիրավորների ինքնությունը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՊԱՐԱԿՆՔՎԱԾ ԵՆ

«Արարատցեմենտ» գործարանում քննչական գործողություններն ավարտվել են, ՔԿ աշխատակիցները հեռացել են, սակայն վարչական շենքի մուտքն ու աշխատասենյակները կապարակնքված են:

Ինչպես հայտնի է, վաղ առավոտից խուզարկություններ են իրականացվում ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի տանը, ինչպես նաեւ նրան պատկանող տարբեր օբյեկտներում, այդ թվում՝ «Օլիմպավան» մարզաառողջարանային համալիրում, Երեւանի «Արարատ» կոնյակի-գինու, օղու կոմբինատում, հյուրանոցներում, «Արարատցեմենտ» գործարանում եւ այլն: ՔԿ-ից հայտնում են, որ տասնյակից ավելի քրեական վարույթների շրջանակում 70-ից ավելի հասցեներում կատարվում են միաժամանակյա խուզարկություններ:

«Առավոտյան մոտավորապես 7:30 միանգամից լայնածավալ «գրոհել են»՝ անգամ անվտանգության աշխատակիցներին վախեցնելով, ուժ գործադրելով, սպառնալով, թե կձերբակալեն եւ այլն: Գործարանը հերթափոխով է աշխատում. տեղում գտնվող աշխատակիցներին հանել են, իսկ հերթափոխն ընդունող աշխատակիցներին թույլ չեն տվել ներս մտնել՝ պարալիզացնելով 1000-ից ավելի աշխատակից ունեցող գործարանի աշխատանքը»,- պատմել է Արտյոմ Պողոսյանը: Նրա խոսքով՝ ՔԿ աշխատակիցները ներկայացրել են դատարանի որոշում, որում, սակայն, նշված է եղել, թե աշխատասենյակներում, հարակից տարածքներում խուզարկությունն արգելվում է:

«Երբ մատնանշեցինք այդ հատվածը, իրենց պատասխանն այն էր, թե մենք մեր գործողություններն ենք անում. գնացեք, բողոքեք»,- նշել է Պողոսյանը: Ըստ նրա՝ այս պահին հսկայական վնասներ են հասցվում գործարանի աշխատանքին: Առաջնահերթ 1000-ից ավելի աշխատակիցների վարձատրության հարցն է: Ցեմենտի բարձումն է դադարեցվել, ինչի հետեւանքով, Պողոսյանի խոսքով, երկրում կատարվող շինարարական աշխատանքները եւս կարող են կոլապսի ենթարկվել: ՔԿ աշխատակիցներն արդեն հեռացել են: Պողոսյանի խոսքով՝ գործարանից ոչինչ չի առգրավվել, սակայն անհասկանալի է, թե ինչպես է գործարանն աշխատելու կապարակնքված դռների պայմաններում:

ԿԱՆՉՎԵԼ Է ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Խուզարկությունից շուրջ մեկ ամիս հետո, այսօր Քննչական կոմիտե վկայի կարգավիճակով հարցաքննությունների են կանչվել Armat Media-ի խմբագիրները, լրագրողները եւ օպերատորները՝ Կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում: Այս մասին հայտնում են Armat Media-ից: Հիշեցնենք, որ հունիսի 5-ից Armat Media-ի խմբագրության դռներըկապարակնքված են, առգրավված է ամբողջ տեխնիկան եւ աշխատակիցների անձնական հեռախոսները: Խուզարկության օրը, խմբագրակազմը հայտարարեց, որ այս գործը ընտրություններից առաջ ԶԼՄ-ի աշխատանքը պարալիզացնելու համար մտածված գործելաոճ էր իշխանությունների կողմից:

● *Հանրապետությունում հուլիսի 2-ից 3-ը գրանցվել է բնակարանային գողության, խուլիգանության 1-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴԵՌ ՈՐՈՇՈՒՄ ՉԿԱ

Աժ ընտրություններից առաջ՝ մարտ ամսին, Տավուշի սահմանամերձ գյուղերի վարչական ղեկավարները Տավուշի մարզպետի աշխատակազմից ստացված ցուցումով հաշվառում էին առանձնատների, տներին կից շինությունների ասբոշիֆերով ծածկերը, որպեսզի դրանք փոխարինվեն մետաղյա թիթեղներով: Բնակչությանն ասել էին, որ ասբեստից շիֆերները քաղցկեղածին են: Մարտի 19-ին տանիքների շիֆերներով ծածկերի փոխարինման ծրագրի վերաբերյալ հարցում եմ արել տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, որտեղից հայտնել են. «ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը մշակում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է քննարկել ասբեստից պատրաստված տանիքների ծածկաթիթեղները փոխարինելու հարցը՝ դիտարկելով անհատական բնակելի տների,ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի ու շինությունների ասբեստից տանիքների փոխարինման աշխատանքների համար ներգրավված վարկերի տոկոսադրույքը սուբսիդավորելու հնարավորությունը, իսկ բազմաբնակարան շենքերի հին տանիքները սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում համաֆինանսավորելու հնարավորությունը: Նախնական հաշվառում, որոշակի հաշվարկներ իրականացնելու եւ ծրագրին նախնական գնահատական տալու նպատակով համապատասխան հանձնարարական է ուղարկվել ՀՀ մարզպետներին եւ հանձնարարվել է ՀՀ ՏԿԵ նախարարություն ներկայացնել տեղեկատվություն ասբեստից տանիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի, անհատական բնակելի տների, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող շենքերի եւ շինությունների եւ պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի վերաբերյալ: Անհրաժեշտ ուսումնասիրությունների եւ քննարկումների ավարտից հետո միայն նախագիծը կշրջանառվի եւ կհստակեցվեն ժամկետներն ու պայմանները»:

Հունիսի 22-ին տեղեկատվական նոր հարցում եմ արել ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանին. «Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի տների, շինությունների ասբոշիֆերից ծածկերը հունիսի 19-20-ի կարկտահարությունից մեծապես վնասվել են, այդ ծածկերի փոխելու համար վերոհիշյալ ծրագիրը ե՞րբ կիրականացվի»:

Նախարարի տեղակալ Ավետիք Դարբինյանը հայտնել է. «ՀՀ կառավարության «Ասբեստից տանիքների փոխարինման «Առողջ տանիք» ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը գտնվում է քննարկման փուլում»: Մարտ ամսից՝ 4 ամիս որոշման նախագիծը կառավարությունում քննարկում են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՑ ԱՌԱՋ

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՀԱՐՎԱԾ Է ՀԱՍՑՐԵԼ

Ռուսաստանի զինված ուժերը հուլիսի 6-ի գիշերը հերթական լայնածավալ հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարձակումն են իրականացրել Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւի եւ հարակից շրջանների ուղղությամբ: Վերջին տվյալներով՝ զոհվել է առնվազն 11 մարդ, տասնյակ քաղաքացիներ վիրավորվել են:

Կիեւի ռազմական վարչակազմի ղեկավար Տիմուր Տկաչենկոյի տեղեկություններով՝ միայն մայրաքաղաքում զոհվել է առնվազն 10 մարդ, եւս 46-ը տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել: Կիեւի հարակից շրջաններում եւս մեկ մարդ է զոհվել, իսկ 10-ը վիրավորվել են:

Ուկրաինայի զինված ուժերի տվյալներով՝ Ռուսաստանը գիշերվա ընթացքում արձակել է 68 հրթիռ եւ կիրառել 351 անօդաչու թռչող սարք:

«Kyiv Independent»-ի փոխանցմամբ՝ առաջին պայթյունները Կիեւում լսվել են տեղական ժամանակով ժամը 01:40-ին, որից հետո նոր հարվածներ են գրանցվել ժամը 02:10-ին եւ 03:15-ին: Օդային տագնապի ազդանշանների ֆոնին հազարավոր բնակիչներ ապաստանել են մետրոյի կայարաններում եւ այլ ստորգետնյա թաքստոցներում:

Տիմուր Տկաչենկոն հայտնել է, որ Կիեւում վնասվել է առնվազն 15 շենք, այդ թվում՝ չորս բնակելի շենք մայրաքաղաքի պատմական Պոդիլսկի շրջանում: Նրա խոսքով՝ փրկարարական աշխատանքները շարունակվում են, եւ զոհերի թիվը կարող է աճել:

Հարձակումը տեղի է ունեցել ՆԱՏՕ-ի գագաթնաժողովից ընդամենը մեկ օր առաջ: Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին դեռ նախօրեին զգուշացրել էր, որ Ռուսաստանը կարող է նոր զանգվածային հարձակում իրականացնել մինչեւ Թուրքիայում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը, որի շրջանակում նախատեսվում է նաեւ նրա հանդիպումը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ:

«Հետախուզությունը կրկին վկայում է, որ ռուսները պատրաստվում են նոր լայնածավալ հարվածի: Սա Պուտինի սովորական գործելաոճն է՝ ԱՄՆ Անկախության օրվանից անմիջապես հետո եւ Անկարայում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովից առաջ», - հայտարարել էր Զելենսկին իր երեկոյան ուղերձում:

Հիշեցնենք, որ նախորդ շաբաթ եւս Ռուսաստանը զանգվածային հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարձակում էր իրականացրել Կիեւի վրա, որի հետեւանքով զոհվել էր 31 մարդ: Այդ հարվածներն այս տարվա ընթացքում մայրաքաղաքի համար ամենամահաբերն էին:

Միաժամանակ, ռուսական կողմից հաղորդվել է, որ Ուկրաինան հարված է հասցրել Ղրիմի Սեւաստոպոլ քաղաքի մերձակայքում գտնվող էներգետիկ ենթակառուցվածքներին: Ռուսաստանի կողմից նշանակված Սեւաստոպոլի ղեկավար Միխայիլ Ռազվոժաեւի պնդմամբ՝ հարձակման հետեւանքով քաղաքը ժամանակավորապես մնացել է առանց էլեկտրամատակարարման:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹՔԱԾ ՈՒՆԻ ՕՐԵՆՔԻ ՎՐԱ

Յուրի Քոքորբելյանը նախկինում 3 անգամ դատապարտվել է այն բանի համար, որ, զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, ավտոմեքենա է վարել: Սակայն նա շարունակել է առանց վարորդական իրավունքի վկայականի ավտոմեքենա վարել:

2026թ. հունիսի 9-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Գոռ Շահբազյանը վճռել է Յուրի Քոքորբելյանի նկատմամբ պատիժ նշանակել կարճաժամկետ ազատազրկման ձեւով՝ 1 ամիս ժամկետով: Քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածի 11-րդ մասի կիրառմամբ սույն դատավճռով նշանակած պատժին՝ 1 ամիս ժամկետով կարճաժամկետ ազատազրկմանը լրիվ գումարել Երեւան քաղաքի առաջին ատյանի քրեական դատարանի 2025թ. հուլիսի 25-ի դատավճռով նշանակված պատժի չկրած մասը՝ 133.062 դրամ տուգանքը եւ նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակել կարճաժամկետ ազատազրկում՝ 1 ամիս ժամկետով եւ տուգանք՝ 133.062 դրամի չափով:

Քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի հիման վրա Յուրի Քոքորբելյանի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, սահմանել 1 տարի ժամկետով փորձաշրջան: Դրանից հետո էլ Յուրի Քոքորբելյանը շարունակել է առանց վարորդական իրավունքի ավտոմեքենա վարել, այս անգամ՝ Տավուշի մարզում:

Նրան քրեական օրենսգրքի 344 հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ չունենալով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, 2026թ. մարտի 21-ին՝ ժամը 18:53-ի սահմաններում, Իջեւան քաղաքի Արցախյան փողոցում վարել է «Մերսեդես» մակնիշի տրանսպորտային միջոց: Այդ քրեական գործով նախնական դատալսումների մայիսի 21-ի նիստը չի կայացել մեղադրյալի չներկայանալու պատճառով, հաջորդ նիստը նշանակվել է հուլիսի 28-ին:

Ո՞վ է 2001թ. ծնված, միջնակարգ կրթությամբ Յուրի Վաչիկի Քոքորբելյանը, որի համար դատարանի վճիռներն ազդեցություն չեն ունենում, զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ շարունակում է ավտոմեքենա վարել: Նա Նիկոլ Փաշինյանի եղբոր՝ Արմեն Փաշինյանի բիզնեսի գործընկերն է: Վանաձորը 17 տարի ղեկավարած Սամվել Դարբինյանն ու նրա եղբայրը՝ Սեյրան Դարբինյանը, Մարց գետի վրա եկամտաբեր՝ տարեկան ավելի քան 200 հազար դոլարի էլեկտրաէներգիա արտադրող փոքր ՀԷԿ-ը 2021թ.ին 50 հազար դրամով վաճառել են «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ, նախկին պատգամավոր Խաչատուր Քոքորբելյանի եղբորորդուն՝ Յուրի Քոքորբելյանին: Նույն օրն այդ ընկերության տնօրեն է դարձել Նիկոլ Փաշինյանի եղբայրը՝ Արմեն Փաշինյանը, որը բնակվել է Ռուսաստանում եւ Հայաստան է վերադարձել միայն 2018-ի իշխանափոխությունից հետո: Նիկոլ Փաշինյանի եղբոր հետ բիզնես անող Յուրի Քոքորբելյանը, լինելով բազում անգամ դատապարտված, ունենալով մեղադրյալի կարգավիճակ, նույնիսկ չի բարեհաճել ներկայանալ իր դատին:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՐՁՐԱՑԵԼ Է 2 ՍՄ-ՈՎ

Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնը ներկայացրել է Սեւանա լճի հիդրոլոգիական ռեժիմը 2026 թվականի հունիսի 29-ից հուլիսի 5-ը:

Սեւանա լճի մակարդակը 2026 թվականի հունիսի 29-ից հուլիսի 5-ն ընկած ժամանակահատվածում բարձրացել է 2 սմ-ով եւ կազմել 1900.77 մ (05.07.26թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 9 սմ-ով, իսկ 2026 թվականի հունվարի 1-ի մակարդակից՝ 55 սմ-ով:

Արփա-Սեւան ջրատարով Սեւանա լիճ տեղափոխված ջրի քանակը 2026 թվականի հունիսի 29-ից հուլիսի 5-ն ընկած ժամանակահատվածում կազմել է 9.979 մլն.մա, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից հուլիսի 5-ը ներառյալ՝ 144.285 մլն խմ:

2026 թվականի հուլիսի 2-ից Սեւանա լճից սկսվել է իրականացվել ոռոգման նպատակով ջրառ, եւ լճից բացթողնված ջրի գումարային ծավալը ըստ Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցքի Գեղամավան դիտակետի հուլիսի 2-ից հուլիսի 5-ը ներառյալ կազմել է 1.731 մլն խմ:

● *Հայաստանի Հանրապետությունում հուլիսի 2-ից 3-ը գրանցվել է 8 դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու:*

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

5 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Եվրոպական վերակառուցման եւ զարգացման բանկը (ՎԶԵԲ) Հայաստանի կապիտալի շուկայում իրականացնելու է 5 մլրդ ՀՀ դրամ ծավալով լողացող արժեկտրոնով պարտատոմսերի թողարկում: Սա ՎԶԵԲ-ի կողմից Հայաստանի կապիտալի շուկայում իրականացվող հերթական ներդրումային նախաձեռնությունն է, որն ուղղված է տեղական արժույթով ֆինանսական գործիքների զարգացմանը, ֆինանսավորումների հնարավորությունների ընդլայնմանը եւ Հայաստանի ֆինանսական շուկայի խորացմանը: Տեղաբաշխումը նախատեսված է 2026 թվականի հուլիսի 7-ին Հայաստանի ֆոնդային բորսայում (AMX)՝ աճուրդի միջոցով:

Թողարկման տեղաբաշխողն է Կոնվերս Բանկը, որը Հայաստանի կապիտալի շուկայում առաջատար դերակատարներից է եւ վերջին տարիներին իրականացրել է կորպորատիվ մի շարք պարտատոմսերի տեղաբաշխումներ: ՎԶԵԲ-ի դրամային պարտատոմսերի տեղաբաշխումը եւս մեկ կարեւոր նախագիծ է Բանկի համար՝ ընդգծելով վերջինիս փորձառությունն ու մասնագիտացումը կապիտալի շուկայի գործարքների կազմակերպման եւ ներդրումային լուծումների ոլորտում:

Տվյալ պարտատոմսերի մարման ժամկետը 36 ամիս է, արժեկտրոնը՝ լողացող. այն կապված է ՀՀ 6 ամսական պետական պարտատոմսերի եկամտաբերության հետ, որը վերանայվելու է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ ապահովելով շուկայական պայմաններին համապատասխան եկամտաբերություն եւ ներդրողներին հնարավորություն տալով օգտվել տոկոսադրույքային միջավայրի փոփոխություններից:

ՎԶԵԲ-ի կողմից դրամային պարտատոմսերի թողարկումը կարեւոր նշանակություն ունի Հայաստանի ֆինանսական համակարգի համար: Նման գործիքները նպաստում են դրամային կապիտալի շուկայի զարգացմանը, երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուրների ձեւավորմանը եւ միջազգային ֆինանսական հաստատությունների մասնակցության ընդլայնմանը տեղական շուկայում: Միաժամանակ, դրանք ներդրողներին առաջարկում են բարձր վարկանիշ ունեցող թողարկողի արժեթուղթ՝ շուկայական պայմաններին համապատասխան եկամտաբերությամբ:

Տեղաբաշխման ավարտից հետո նախատեսվում է պարտատոմսերը ներկայացնել AMX-ում ցուցակման, ինչպես նաեւ նախաձեռնել անհրաժեշտ գործընթացները՝ ՀՀ կենտրոնական բանկի ռեպո գործարքներում դրանց օգտագործման հնարավորությունն ապահովելու նպատակով: Սա կարող է էապես բարձրացնել պարտատոմսերի իրացվելիությունը եւ ներդրումային գրավչությունը երկրորդային շուկայում:

Աճուրդին հնարավոր է մասնակցել Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար՝
+374 10 511 211
- investments@conversebank.am
- corpinvest@conversebank.am

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Գ)

«ՌԵՆՇԻՆ» Գ

ԱՅՆ ԿԱՍԿԱԴԸ, ՈՐԻՆ ԱՐԺԱՆԻ Է ԵՐԵՎԱՆԸ

«Ռենշին» ընկերությունը եւ GTB Հոլդինգը միավորվել են՝ հանուն մայրաքաղաքի Հայաստանի քաղաքաշինական շուկայի երկու խաղացողներ՝ «Ռենշին» ընկերությունը եւ «Ջի Թի ի Դիվելոփմենթ»-ը, ստորագրել են ռազմավարական համագործակցության հուշագիր: Գործարքի արդյունքում շուրջ 25 տարվա պատմություն ունեցող «Ռենշինը» ձեռք է բերում Կասկադ համալիրի նախագծի բաժնեմաս՝ իր հետ բերելով շուրջ 1 միլիոն քառակուսի մետր դրեմիում դասի կառուցապատման հաջողված փորձը:

Սա նշանակում է, որ մայրաքաղաքի գլխավոր մշակութային եւ քաղաքաշինական հանգույցի ավարտը վստահվել է բարձրագույն միջազգային ստանդարտներ թելադրող թիմի: Այս միավորումը պարզապես բիզնես գործարք չէ, այլ ռազմավարական քայլ՝ հանուն քաղաքի ու քաղաքացու: GTB Դիվելոփմենթ ընկերության տնօրեն Գոռ Միքայելյանի խոսքով՝ իրենց համար բացարձակ առաջնահերթությունը Կասկադի նախագծի հաջողությունն է եւ Երեւանի շահը: «Այդ իսկ պատճառով մենք ռազմավարական որոշում կայացրեցինք նախագիծը համատեղ իրագործել քաղաքաշինական շուկայի առաջատարի հետ: «-Ռենշինի» հեղինակությունը, ֆինանսական կայունությունն ու մասշտաբային նախագծերի կառավարման անքննելի փորձը լավագույն երաշխիքն են առ այն, որ մեր համաքաղաքացիները կստանան այն Կասկադը, որին արժանի են: Սա բացառիկ համագործակցություն է՝ հանուն Երեւանի», - ընդգծել է Գոռ Միքայելյանը: «Ռենշինն» արդեն իսկ իրագործում է մայրաքաղաքի դեմքը փոխող այնպիսի մեգանախագծեր, ինչպիսիք են Artlife Kempinski Residences Yerevan-ը, Համաշխարհային առեւտրի կենտրոնը (WTCY) եւ Երեւանում առաջին երկնաքերերի Skyline թաղամասը: Ընկերության ռազմավարական զարգացման տնօրեն Անի Մավյանի խոսքով՝ Կասկադին միանալը մեծագույն պատասխանատվություն է.

«Կասկադը պարզապես նախագիծ չէ, այն Երեւանի սիրտն ու հոգին է: Այս հուշագրի ստորագրումով մենք հանձնառու ենք վերարժեւորել Երեւանի ամենակարեւոր այցեքարտերից մեկը՝ ապահովելով բացառիկ որակ, պրոֆեսիոնալ փորձառություն եւ միջազգային ստանդարտներ: Մենք ուրախ ենք, որ մեր գործընկերների կողմից նախագծի մեկնարկն ապահովելուց հետո այսօր վստահությամբ միանում ենք դրան՝ մեր ավելի քան երկու տասնամյակի փորձը լավագույնս ծառայեցնելու՝ ի նպաստ Երեւանի նոր ու ժամանակակից դիմագծի եւ եւս մեկ նշանային կառույցի կերտմանը, որը կբավարարի հանրության ու մասնագիտական շրջանակների ամենաբարձր պահանջները»:

Հատկանշական է, որ երկու ընկերություններին միավորում է ոչ միայն այս բացառիկ քաղաքաշինական տեսլականը, այլեւ սոցիալական բարձր պատասխանատվությունն ու մշակույթին աջակցելու հանձնառությունը: Պատահական չէ, որ ե՛ւ «Ռենշին»-ը, ե՛ւ GTB հոլդինգը տաղանդավոր պատանի երաժիշտներին աջակցող «Music for future» հիմնադրամի խոշոր հովանավոր ու գործընկեր են: Այս հուշագիրն ազդարարում է նախագծի զարգացման առավել դինամիկ փուլը:

Առաջիկայում կիրապարակվեն նաեւ կառավարման, ճարտարապետական լուծումների եւ համաշխարհային գործընկերների մասին մանրամասները, սակայն մի բան արդեն հստակ է՝ Կասկադի շուրջ միավորվել են լավագույն ուժերը, ինչը հստակ վստահություն է ներշնչում վերջնարդյունքի հարցում:

ՋՊՄԿ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱՐԵԼԱՎԵԼ Գ

Զանգեզուրի ոդնձամոլիբդենային կոմբինատի համար ազդակիր համայնքների կայուն զարգացումն ու բնակիչների կյանքի որակի բարձրացումն ունեն առաջնահերթ նշանակություն:



Ընկերության համար սոցիալական պատասխանատվությունը ոչ թե պարզապես ծրագիր է, այլ ամենօրյա հոգատարություն Սյունիքի եւ սյունեցու հանդեպ:

2024 թվականին մեկնարկած լայնածավալ էներգետիկ նախագծով ազդակիր բնակավայրերն անցում են կատարում էկոլոգիապես մաքուր եւ խնայողական տեխնոլոգիաների:

Սյունիք, Սզնակ, Դիցմայրի, Խորձոր եւ Բարգուշատ բնակավայրերում ՋՊՄԿ ֆինանսավորմամբ տեղադրվել է՝

273 արեւային ֆոտովոլտային կայան

227 արեւային ջրատաքացուցիչ

Իսկ Արծվանիկ, Սեւաքար, Չափնի, Աճանան եւ Ըրկենանց բնակավայրերի 51 բազմազավակ ընտանիքների տանիքներին տեղադրվել են ժամանակակից արեւային ջրատաքացուցիչներ:

Այս երկու ռազմավարական ծրագրերի իրականացման համար ՋՊՄԿ-ն հատկացրել է ավելի քան 227 միլիոն դրամ: Այս նախաձեռնությունները ոչ միայն էականորեն նվազեցնում են բնակիչների կոմունալ ծախսերը, այլեւ ունեն կարեւոր բնապահպանական նշանակություն:

Արդյունքում՝ նշված գյուղերի բնակիչներն ամբողջությամբ հրաժարվել են վառելափայտի օգտագործումից՝ ընտրելով ավելի մաքուր, անվտանգ եւ կայուն էներգիայի աղբյուրներ: (Գ)

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

ՓԱՌԱՏՈՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՀՈՒԼԻՍԻ 13-19-Ը

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ՝ որդես կինոյի ոլորտի բյուջետային ծրագիր՝ արդեն 23-րդ անգամ կանցկացվի Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը: Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՍ նախարարությունից: Այս տարի 90 երկրից շուրջ 600 հայտ է ներկայացվել, որոնցից փառատոնային ծրագրում ընգրկվել է 90 ֆիլմ՝ 40 երկրից:

Փառատոնը կանցկացվի հուլիսի 13-19-ը. ցուցադրությունները տեղի կունենան Կինոյի տանը, «Մոսկվա» եւ «Նաիրի» կինոթատրոններում: Փառատոնի գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն է:

Փառատոնին ընդառաջ Կինոյի տանը տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանի, Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանի, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադիր նախագահ Հարություն Խաչատրյանի, փառատոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանի եւ միջազգային բաժնի ղեկավար Վարվառա Հովհաննիսյանի մասնակցությամբ:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Տիգրան Վիրաբյանը ողջունել է ներկաներին՝ ընդգծելով, որ իր համար մեծ պատիվ է պաշտոնավարման նորամուտին մասնակիցը լինել «Ոսկե ծիրան» փառատոնի ասուլիսին. «Երկար տարիներ իմ բոլոր ընկերները, գործընկերները, սփյուռքի գործընկերներն իրենց հունիս-հուլիս ամիսները պլանավորելիս հետաքրքրվում են, թե երբ է անցկացվելու «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը: Սա նշանակում է, որ մարդիկ սկսել են իրենց հանգիստը պլանավորել՝ նաեւ առաջնահերթություն տալով եւ օրացույցում ունենալով մշակութային այս գեղեցիկ ու կարեւոր իրադարձությունը՝ «Ոսկե ծիրան» փառատոնը»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը, շնորհակալություն հայտնելով գործընկերներին եւ փառատոնի հիմնադիրներին, նշել է, որ հանդիսատեսի համար փառատոնը սկսվում եւ ավարտվում է օրացույցի որոշակի օրերին՝ որպես ֆիլմեր վայելելու մեկ շաբաթ. «Մինչդեռ փառատոնի թիմի համար այդ օրերը սկսվել են 23 տարի առաջ եւ շարունակվում են մինչեւ այսօր: Յուրաքանչյուր տարվա փառատոնից հետո նրանք նախապատրաստվում են հաջորդ փառատոնին, եւ այս աշխատանքն ու ջանքերն անգնահատելի են, ինչի արդյունքում «Ոսկե ծիրանը» աշխարհի լավագույն կինոփառատոներից մեկն է»:

Երեւանի քաղաքապետի տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը հատկապես կարեւորել է «Ոսկե ծիրան» փառատոնի՝ միջազգային ասպարեզում վարկանիշի նշանակալի բարձրացումը, ինչը, ըստ նրա, պայմանավորում է նաեւ որպես գլխավոր հովանավոր՝ զգալի ավելացնել ֆինանսավորումը:

Նշվել է, որ «Ոսկե ծիրան» փառատոնը վարկանիշավորվել է Կինոպրոդյուսերների ասոցիացիայի համաշխարհային ֆեդերացիայի կողմից՝ ընդգրկվելով թոփ 50 փառատոների մեջ:

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադիր նախագահ Հարություն Խաչատրյանը շնորհակալություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր փառատոնի սկզբից հավատացել են դրա կայացմանն ու եղել են գաղափարի կողքին. «-Մենք սկսեցինք փառատոնը, որ կինո ունենանք, եւ այսօր կինոողորտի աշխուժությունը վկայում է, որ ճիշտ ուղղության վրա ենք»:

Փառատոնի ծրագիրը համառոտ ներկայացրել է տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանը՝ ընդգծելով, որ «Ոսկե ծիրանի» փառատոնն ունի տարածաշրջանային եւ միջազգային ազդեցություն, ինչը կարեւոր ձեռքբերում է: Այս համատեքստում նա անդրադարձել է Կաննի կինոփառատոնի հետ համագործակցությանը:

Այս տարի այդ համագործակցության շրջանակում համատեղ արտադրության չորս կարճամետրաժ ֆիլմ է ստեղծվելու՝ հայ եւ եվրոպացի ռեժիսորների համահեղինակությամբ:

Կարեն Ավետիսյանի տեղեկացմամբ՝ փառատոնի բացումը տեղի կունենա հուլիսի 13-ին՝ հայ-ֆրանսիական համատեղ արտադրության Թամարա Ստեփանյանի «Արտոյի երկիրը» ֆիլմի ցուցադրությամբ: Փառատոնի «Միջազգային ժյուրիի» նախագահը ժամանակակից ավստրիական կինոյի առաջատար դեմքերից է՝ Ջեսիկա Հաուսները: Նրա ֆիլմերի պրեմիերաները կայացել են Կաննում եւ Վենետիկում՝ արժանանալով լայն ճանաչման ժանրային կինոյում նորարարական մոտեցման համար: Մահմուդ Քալարին, որն իրանական կինոյի հայտնի օպերատորներից է, կգլխավորի «Տարածաշրջանային մրցույթի» ժյուրին:

Փառատոնի այս տարվա պատվավոր հյուրն է ֆրանսահայ նշանավոր դերասան Սիմոն Աբգարյանը:

«Մենք ունենք նաեւ հռչակավոր պատվո հյուր. աշխարհահռչակ լեհ ռեժիսոր Պավել Պավլիկովսկին է՝ Օսկարի եւ բազմաթիվ կինոփառատոնների դափնեկիր: Երեւանյան հանդիսատեսին կներկայացվի նրա «Fatherland» նոր ֆիլմը»,-ասել է Կարեն Ավետիսյանը:

Միջազգային բաժնի ղեկավար Վարվառա Հովհաննիսյանի տեղեկացմամբ՝ կինոփառատոնն այս տարի եւս կներկայացնի մրցութային եւ արտամրցութային ծրագրեր աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ ֆիլմեր հեղինակավոր միջազգային կինոփառատոներից՝ ներառյալ Կաննը, Բեռլինը եւ այլ առաջատար կինոհարթակներ:

Փառատոնի գլխավոր պաստառն այս տարի նվիրված է պոեզիային. գլխավոր պաստառի հեղինակը հայտնի նկարիչ եւ դիզայներ Իգոր Գուրովիչն է:

ԱՆԳԼԻԱՆ ՔԱՌՈՐԴ ԵՋՐԱՓԱԿՉՈՒՄ Է

ԱԱ-2026-ի 1/8 եզրափակչում Անգլիայի հավաքականը լարված եւ դրամատիկ դայֆարում 3:2 հաշվով պարտության մատնեց Մեքսիկայի ընտրանուն՝ նվաճելով քառորդ եզրափակչի ուղեգիր:

Մեխիկոյում կայացած հանդիպումն աչքի ընկավ գոլերի առատությամբ, հեռացումով, երկու 11-մետրանոցներով եւ հետխաղյա ցավալի ու անհեթեթ միջադեպով:

Խաղի մեկնարկը եղանակային վատ պայմանների եւ կայծակի վտանգի պատճառով հետաձգվել էր մեկ ժամով: Սակայն դա չխանգարեց թիմերին ցուցադրել դիտարժան ֆուտբոլ:

Անգլիացիների կազմում փայլեց Ջուդ Բելինգհեմը, ով ճանաչվեց խաղի լավագույն ֆուտբոլիստ: Կիսապաշտպանը հանդիպման 36-րդ եւ 38-րդ րոպեներին դարձավ արագ դուբլի հեղինակ: Մեքսիկացիները չհանձնվեցին, եւ արդեն 42-րդ րոպեին Խուլիան Կինյոնեսը կրճատեց հաշվի տարբերությունը:

Երկրորդ խաղակեսի սկզբում (52-րդ րոպե) անգլիացիները հայտնվեցին բարդ իրավիճակում. Խեսուս Գալարդոյի նկատմամբ կոպիտ խաղի համար խաղադաշտից հեռացվեց անգլիացիների պաշտպան Ջարել Քուենսան: Չնայած քանակական անհավասարությանը, ընդամենը որոպեներ անց Հարի Քեյնը անվրեպ իրացրեց 11-մետրանոցը՝ հաշիվը դարձնելով 3:1:

Հանդիպման ինտրիգը վերադարձավ 69-րդ րոպեին, երբ նույն Քեյնը կանոնները խախտեց սեփական տուգանային հրապարակում, իսկ Մեքսիկայի հարձակվող Ռաուլ Խիմենեսը դիպուկ իրացրեց նշանակված 11-մետրանոցը՝ հաշիվը դարձնելով 3:2: Սակայն մեքսիկացիներին ավելին անել չհաջողվեց:

Խաղից հետո անգլիացիների ճամբարում գրանցվեց տարօրինակ եւ ցավալի միջադեպ: Անգլիայի հավաքականի 36-ամյա կիսապաշտպան Ջորդան Հենդերսոնը, ով ամբողջ խաղն անցկացրել էր պահեստայինների նստարանին (նախքան այդ հասցնելով դեղին քարտ ստանալ մրցավարի հետ վիճելու համար), հաղթանակը տոնելիս լուրջ վնասվածք ստացավ: Գովազդային վահանակի վրայով ցատկելիս նա անհաջող ընկավ ձեռքի վրա: Ֆուտբոլիստին դաշտից հեռացրին պատգարակով՝ միացնելով թթվածնային դիմակ:

«Շատ վատ է: Դրան գումարվեց նաեւ Քուենսայի կարմիր քարտը: Ջորդանը վայր ընկավ եւ վնասեց դաստակը, տեսարանը շատ վատն էր», - նշել է Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Թոմաս Տուխելը: *(Սյուժը՝ armsport-ից)*

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԻՉԸ՝ ՖԻՖԱ-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

ՖԻՖԱ-ն աննախադեպ որոշում է կայացրել 2026 թվականի աշխարհի առաջնությունում՝ կասեցնելով ԱՄՆ-ի հավաքականի հարձակվող Ֆոլարին Բալոգունի որակազրկումը Բելգիայի դեմ 1/8 եզրափակիչի հանդիպումից անմիջապես առաջ:

Բալոգունը ԱԱ-2026-ի 1/16 եզրափակիչի Բոսնիա եւ Հերցեգովինայի դեմ խաղում (2:0) ուղիղ կարմիր քարտ էր ստացել եւ, ըստ կանոնակարգի, պետք է բաց թողներ բելգիացիների դեմ հանդիպումը: Սակայն կիրակի օրը հայտնի դարձավ, որ ՖԻՖԱ-ն ավտոմատ որակազրկման որոշումը կասեցրել է՝ սահմանելով մեկ տարվա փորձաշրջան: Այսպիսով, ամերիկացի հարձակվողը կկարողանա մասնակցել հուլիսի 6-ին կայանալիք խաղին:

Բելգիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռուդի Գարսիան չի թաքցրել իր զարմանքը կատարվածի վերաբերյալ՝ իրավիճակը համեմատելով կատակի հետ. «Ես չգիտեի, որ ԱՄՆ-ում հուլիսի 5-ը ապրիլի 1-ն է: Ինձ համար սա բացահայտում էր: Կարծում եմ՝ ՖԻՖԱ-ի պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ նման բան է տեղի ունենում: Բելգիայի թագավորական ֆուտբոլային ասոցիացիայի հայտարարության մեջ ամեն ինչ ասված է. նրանք պաշտպանում են ոչ միայն բելգիական, այլեւ համաշխարհային ֆուտբոլը: Մեզ համար, սակայն, ոչինչ չի փոխվում: Մենք, իհարկե, փոքր-ինչ զարմացած էինք, քանի որ դա տեղի ունեցավ խաղից մեկ օր առաջ, բայց մենք պետք է հաղթենք դաշտում: Բալոգունը լավ խաղացող է, բայց մենք պետք է հաղթենք ԱՄՆ-ի հավաքականին, ոչ թե միայն նրան»,- Het Laatste Nieuws-ը մեջբերում է Գարսիայի խոսքերը, գրում է armsport-ը:

Թիմի դարպասապահ Տիբո Կուրտուան եւս հանգիստ է արձագանքել լուրին՝ նշելով. «Մենք պատրաստ ենք ԱՄՆ-ի բոլոր հարձակվողների դեմ խաղին: Մեզ համար սա քիչ բան է փոխում»:

Մինչ թիմը կենտրոնացած է բուն խաղի վրա, Բելգիայի ֆուտբոլային ասոցիացիան հանդես է եկել կոշտ հայտարարությամբ՝ ՖԻՖԱ-ի որոշումը որակելով որպես սեփական կանոնակարգի կոպիտ խախտում:

«RBFA-ն իր զարմանքն է հայտնում ՖԻՖԱ-ի որոշման վերաբերյալ: ՖԻՖԱ-ն այն հիմնավորում է կարգապահական օրենսգրքի 27-րդ հոդվածով, ըստ որի՝ կոմիտեն իրավունք ունի կասեցնել նախկինում կիրառված պատիժը: Սակայն նույն օրենսգրքի 66.4 հոդվածը հստակ սահմանում է, որ կարմիր քարտը ավտոմատ կերպով հանգեցնում է հաջորդ խաղի որակազրկման, ինչպես դա եղել է այս առաջնության բոլոր նախորդ կարմիր քարտերի դեպքում:

Բացի այդ, այս որոշումն ուղղակիորեն հակասում է ԱԱ-2026-ի կանոնակարգի 10.5 հոդվածին: Հանուն արդար խաղի հիմնարար սկզբունքների պահպանման եւ բոլոր մասնակից թիմերի օրինական իրավունքների պաշտպանության՝ մենք ուսումնասիրում ենք մեր գործողությունների բոլոր հնարավոր տարբերակները»,- ասվում է կառույցի պաշտոնական հայտարարության մեջ:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 18-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Կարմեն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞րն է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դերը կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացում:

Լիդա Ղազարյան, 62 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ 2023-2026թթ. հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի հիման վրա 2024 թվականին Հանձնաժողովը մշակել եւ Արդարադատության նախարարություն է ներկայացրել ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է Հանձնաժողովին վերապահել հանրային իշխանության մարմիններում, պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 եւ ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության եւ համայնքի մասնակցությամբ առեւտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման եւ կառավարման միասնականության ապահովման, իրավասու մարմիններ առաջարկությունների ներկայացման գործառույթները: Բացի այդ, նախագծի ընդունմամբ Հանձնաժողովին կվերապահվի նաեւ կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման եւ հաստատման, ինչպես նաեւ մասնագիտական խորհրդատվության եւ մեթոդական աջակցության տրամադրման գործառույթները: Այս փուլում Հանձնաժողովը կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության նախագծի հիման վրա իրականացնում է կոռուպցիոն ռիսկերի փորձնական գնահատումներ՝ նախագիծը լավարկելու եւ ՀՀ առանձնահատկություններին համապատասխանեցնելու նպատակով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք միայն վարդապետները կարող են լինել կուսակրոն, թե՞ յուրաքանչյուր քահանա՝ իր ցանկությամբ:

Վարազդատ Սահակյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կուսակրոն կամ ամուսնացյալ քահանա դառնալու որոշումը կայացնում են մինչեւ ձեռնադրվելը՝ սարկավագ եղած ժամանակ: Թե ամուսնացյալ, թե կուսակրոն սարկավագները քահանա են ձեռնադրվում նույն ծեսով, կարող են անգամ միաժամանակ ձեռնադրվել: Նույն օրը երեկոյան, ձեռնադրող եպիսկոպոսը կամ կաթողիկոսը կուսակրոնության ճանապարհ ընտրած քահանաներին տալիս են վեղար, որը չեն կարող կրել ամուսնացյալները:

Քահանա են կոչվում բոլոր ձեռնադրվածները՝ կուսակրոն, թե ամուսնացյալ, սակայն ի տարբերություն ամուսնացյալ քահանաների՝ կուսակրոններն իրավունք ունեն ստանալ մի քանի աստիճան՝ աբեղա, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս: Հաճախ հայրաբանական գրականության մեջ նրանց բոլորին կոչում են քահանա:

Ամուսնացյալներին կուսակրոններից տարբերում են վեղարով: Դա գլխի բրգաձեւ ծածկոց է, որը կրում են միայն կուսակրոնները:

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ավտովթար-հրդեհ՝ Երեւանում. «Mitsubishi»-ն Թբիլիսյան խճուղում բախվել է բազալտե եզրաքարին, ապա կոտրել երկաթե էլեկտրասյունը: Վիրավորը տեղափոխվել է Այրվածքաբանության ազգային կենտրոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՔԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+10 + 15 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 10 + 14 + 18 + 23
	Կոտայքի նախալեռներ	+ 16 + 18 + 23 + 26
	Գեղարքունիք	+ 10 + 15 + 19 + 24
	Լոռի	+ 13 + 16 + 21 + 24
	Տավուշ	+ 14 + 17 + 22 + 25
	Արագածոտնի լեռներ	+ 10 + 13 + 17 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 18 + 23 + 28

	Արարատ	+ 17 + 19 + 27 + 30
	Արմավիր	+ 18 + 20 + 30 + 32
	Վայոց ձորի լեռներ	+ 10 + 13 + 17 + 21
	Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 20 + 30 + 32
	Սյունիքի լեռներ	+ 9 + 12 + 17 + 20
	Սյունիքի նախալեռներ	+ 12 + 15 + 22 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 20 + 28 + 31
	Երեւան	+ 18 + 20 + 28 + 30

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **06.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*